



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հունիսի 2018 թվականի թիվ 72 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ 100 ՏՈԿՈՍ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ
ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ՉԱՓԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի թիվ 202-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ, 12-րդ և 13-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 2018 թվականի հունիսի 8-ի թիվ 01/3-3/10311-18 գրությունը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության 100 տոկոս պետական մասնակցությամբ առևտրային ընկերությունների 2017թ. Տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի չափերը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել տնօրեններին սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ քան մինչև ս/թ հոկտեմբերի 1-ը, ապահովել շահութաբաժնի փոխանցումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 900005200424 հաշվին:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ռ.Ներսեսյանի վրա:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Վ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

6/12/2018

X *[Handwritten signature]*

2018 թ. հունիսի 12
ք. Իջևան

ԱՐԴՅՈՒՆ ԽԱՆ

1. Հանրային հարկերի հարկապահության մասին մարզպետարանի կողմից կատարված աշխատանքների արդյունքները 2017 թ. հարկային տարեկան հաշվառման արդյունքներում արտացոլված զրոյի շեղումը բացահայտելու և հարկապահության մասին արդյունքները համաձայնեցնելու հարցում:
2. Հանրային հարկերի հարկապահության մասին մարզպետարանի կողմից կատարված աշխատանքների արդյունքները 2017 թ. հարկային տարեկան հաշվառման արդյունքներում արտացոլված զրոյի շեղումը բացահայտելու և հարկապահության մասին արդյունքները համաձայնեցնելու հարցում: